ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ/2652/02/22**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«21» մայիսի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

քննարկելով ըստ «Սիմիրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Արմինե Մկրտչյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Արմինե Մկրտչյանից բռնագանձել 1.230.369 ՀՀ դրամ, որից 1.000.300 ՀՀ դրամը՝ որպես անհիմն հարստացման գումար, 230.069 ՀՀ դրամը՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 04.12.2023 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.06.2024 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 04.12.2023 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սնանկության դատարանի 31.01.2023 թվականի թիվ ՍնԴ/3313/04/22 վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ:

Սնանկության դատարանի 05.05.2025 թվականի վճռով սնանկության գործն ավարտվել է այն պատճառաբանությամբ, որ *«Տվյալ դեպքում սնանկության գործի շրջանակներում դատարանի կողմից հաստատված և պարտատերերի գրանցամատյանում հաշվառված բոլոր պահանջները բավարարվել են, մարվել է նաև կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, իսկ վերջնական հաշվետվությունը պարտատերերի կողմից չի առարկվել: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սույն օրենքի 67-րդ հոդվածի առաջին մասով, 69-րդ հոդվածի չորրորդ մասի «ա» կետով, ինչպես նաև 74-րդ և 89-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեպքում պարտապանը համարվում է ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը»:*

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Աղամալյանը 17.03.2025 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍնԴ/3313/04/22 սնանկության գործով 31.01.2023 թվականի վճռով «պատասխանող Արմինե Մկրտչյանը» ճանաչվել է սնանկ: Փաստորեն սույն գործով առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմք՝ այն է. Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում: Հետևաբար հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանությունները, քաղաքացիական գործի քննության ընթացքում պարզված և հաստատված տեղեկություններն ու հանգամանքները, Դատարանի վերլուծությունները և դրա հիման վրա ձեռքբերված լրացուցիչ տեղեկությունները, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ սնանկության մասին օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից՝ Դատարանը եկել է այն եզրահանգման, որ թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործը ենթակա է հանձնման այլ՝ ՀՀ սնանկության դատարանի քննությանը»:

Գործն ստացվել է Սնանկության դատարանում և 06.05.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Բ. Մկրտչյանին:

Սնանկության դատարանի դատավոր Բ. Մկրտչյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 07.05.2025 թվականին որոշում է կայացրել գործի ենթակայությունը որոշելու համար թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնակարգումների հիման վրա ընդհանուր իրավասության դատարանից ըստ ենթակայության ստացված քաղաքացիական գործը կարող է սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում քննվել, եթե այդ սնանկության գործը դեռևս ավարտված չէ և գտնվում է ՀՀ սնանկության դատարանի վարույթում:

Սույն դեպքում դատարանը պարզեց, որ թիվ ՍնԴ/3313/04/22 սնանկության գործն ըստ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի դիմումի ընդդեմ «ՍԻՄԻՐԱՄ» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին, ՀՀ սնանկության դատարանի 2025թ. մայիսի 05-ի վճռով ավարտվել է պարտապան

իրավաբանական անձի ֆինանսապես առողջացմամբ և վճիռը մտել է օրինական ուժի մեջ, այսինքն՝ թիվ ՍՆԴ/3313/04/22 սնանկության գործն այլևս չի գտնվում ՀՀ սնանկության դատարանի դատավոր Բ. Մկրտչյանիս վարույթում:

Բացի այդ. (...)

Դատարանը փաստում է, որ սույն դեպքում բացակայում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված վավերապայմանների միաժամանակյա առկայության փաստը այն հիմնավորմամբ, որ չնայած թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործով վեճը ծագել է թիվ ՍՆԴ/3313/04/22 սնանկության գործով պարտապան «ՍԻՄԻՐԱՄ» ՍՊԸ-ի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ (հնարավոր դրամական միջոցների ձեռքբերում), սակայն այդ վեճը չի կարող ազդեցություն ունենալ սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, քանի որ ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին» 2025թ. մարտի 17-ի որոշման կայացման պահին արդեն իսկ թիվ ՍՆԴ/3313/04/22 սնանկության գործով ներկայացված և չբավարարված որևէ պարտատիրոջ պահանջ առկա չի եղել, ուստի նույնիսկ հայցի հնարավոր բավարարման դեպքում բռնագանձման ենթակա գումարը ուղղվելու է ոչ թե թիվ ՍՆԴ/3313/04/22 սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարմանը, այլ տրվելու է սույն գործով հայցվոր «ՍԻՄԻՐԱՄ» ՍՊԸ-ին:

Վերը նշված հաշվառմամբ դատարանը գտնում է, որ բացակայում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնակարգումների հիման վրա թիվ ՍՆԴ/3313/04/22 սնանկության գործի շրջանակներում թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործը քննելու իրավական հնարավորությունը»:

Թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 14.05.2025 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն

ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում, որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Նույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի

քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ ենթակա է քննության միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի՝

ա) կամ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ,

բ) կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ,

գ) կամ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից, բացառությամբ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հայցերից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերից.

2. նշված յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Ընդ որում, Սնանկության դատարանը, ընդհանուր իրավասության դատարանից ստանալով քաղաքացիական գործը, յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

Սույն քաղաքացիական գործով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Արմինե Մկրտչյանից բռնագանձել 1.230.369 ՀՀ դրամ, որից 1.000.300 ՀՀ դրամը՝ որպես անհիմն հարստացման գումար, 230.069 ՀՀ դրամը՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ:

Սնանկության դատարանի 31.01.2023 թվականի թիվ ՍՆԴ/3313/04/22 վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ, իսկ արդեն Սնանկության դատարանի 05.05.2025 թվականի վճռով սնանկության գործն ավարտվել է:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումներից բխում է, որ քաղաքացիաիրավական վեճը՝ որպես առանձին քաղաքացիական գործ, կարող է ենթակա լինել սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում քննության, եթե այն դեռևս քննվում է (չի ավարտվել):

Մինչդեռ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 17.03.2025 թվականի «Քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին» որոշման հիման վրա Սնանկության դատարան ուղարկված սույն քաղաքացիական գործը Սնանկության դատարանում ստացվելու դրությամբ թիվ ՍՆԴ/3313/04/22 սնանկության գործն ավարտված է եղել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործն ըստ «Սիմիրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցի ընդդեմ Արմինե Մկրտչյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ենթակա է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԳԴ/2652/02/22 քաղաքացիական գործն ըստ «Սիմիրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցի ընդդեմ Արմինե Մկրտչյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ենթակա է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող _____ ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող _____ ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

_____ ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

_____ ***Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

_____ ***Ս. ՄԵՂՐՅԱՆ***

_____ ***Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ***

_____ ***Վ. ՔՈՉԱՐՅԱՆ***